# <<Վիճակագրական հաշվետվությունների փնտրման համակարգ>>-ից օգտվելու ուղեցույց

Հարգելի գործընկեր, սույն ուղեցույցը նկարագրում է <<Վիճակագրական հաշվետվությունների փնտրման համակարգ>>-ից օգտվելու կարգը: Ձեր կողմից ԱՐՄՍՏԱՏ-ին ներկայացման ենթակա վիճակագրական հաշվետվական ձևերը համակարգչում բեռնելու համար անհրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացվող քայլերը.




1. Եթե գիտեք Ձեր կողմից իրականացվող տնտեսական գործունեության տեսակի ծածկագիրը, ապա անհրաժեշտ է <<Տնտեսական գործունեության տեսակի ծածկագիրը>> դաշտում հավաքել այն և սեղմել Փնտրել սեղմակը, այնուհետև կատարել 3-րդ կետում նշված գործողությունները:
2. Եթե չգիտեք Ձեր կողմից իրականացվող տնտեսական գործունեության տեսակի ծածկագիրը, ապա անհրաժեշտ է.

   ա) <<Տնտեսական գործունեության ոլորտը>> դաշտից ընտրել համապատասխան տնտեսական գործունեության ոլորտը



և սեղմել **Փնտրել** սեղմակը:

Այնուհետև II սունյակում որոնել Ձեր կողմից իրականացվող գործունեությանը համապատասխանող տնտեսական գործունեության տեսակի անվանումը,

| I | II | III | IV |
|---|---|---|---|
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Թեթև մարդատար ավտոմոբիլների մեծածախ առևտուր | 45.11.1 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Թեթև մարդատար ավտոմոբիլների մանրածախ առևտուր | 45.11.2 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Մարդատար մասնագիտացված ավտոմեքենաների մեծածախ առևտուր | 45.11.3 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Մարդատար մասնագիտացված ավտոմեքենաների մանրածախ առևտուր | 45.11.4 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Այլ ավտոմեքենաների առևտուր | 45.19.0 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում | 45.20.1 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. | Ավտոմեքենաների վերասարքավորում | | |

և կատարել 3-րդ կետում նշված գործողությունները, կամ

բ) <<Տնտեսական գործունեության տեսակը>> դաշտից կատարել որոնում՝ հավաքելով Ձեր կողմից իրականացվող տնտեսական գործունեության տեսակի անվանումը կամ դրա մի մասը (օր. <<Կոշիկի արտադրություն>> փնտրելու դեպքում հավաքել <<Կոշիկ>>),

| Տնտեսական գործունեության ոլորտը | Տնտեսական գործունեության տեսակը | Տնտես. գործուն. տեսակի ծածկագիրը |
|---|---|---|
| - բոլորը - | կոշիկ | |

**Փնտրել**

| I | II | III | IV |
|---|---|---|---|
| C. Մշակող արդյունաբերություն | Կոշիկի արտադրություն | 15.20.0 | Ցանկ N7 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Կոշիկի մեծածախ առևտուր | 46.42.3 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Կոշիկի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում | 47.72.1 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Մանածագործական արտադրատեսակների, հագուստի և կոշիկի մանրածախ առևտուր շուկաներում և կրպակներում | 47.82.0 | Ցանկ N11 |
| Տ. Սպասարկման այլ ծառայություններ | Կոշիկի նորոգում | 95.23.1 | Ցանկ N16 |

այնուհետև սեղմել **Փնտրել** սեղմակը և կատարել 3-րդ կետում նշված գործողությունները:

3. Համակարգի IV սունյակում սեղմելով Ձեր կողմից նախապես ընտրված տնտեսական գործունեության տեսակին համապատասխան համարը կրող ցանկի հղման վրա,

| Տնտեսական գործունեության ոլորտը | Տնտեսական գործունեության տեսակը | Տնտես. գործուն. տեսակի ծածկագիրը |
|---|---|---|
| - բոլորը - | կոշիկ | |

Փնտրել

| I | II | III | IV |
|---|---|---|---|
| C. Մշակող արդյունաբերություն | Կոշիկի արտադրություն | 15.20.0 | Ցանկ N7 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Կոշիկի մեծածախ առևտուր | 46.42.3 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Կոշիկի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում | 47.72.1 | Ցանկ N11 |
| G. Մեծածախ եվ մանրածախ առեվտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում | Մանածագործական արտադրատեսակների, հագուստի և կոշիկի մանրածախ առևտուր շուկաներում և կրպակներում | 47.82.0 | Ցանկ N11 |
| Տ. Սպասարկման այլ ծառայություններ | Կոշիկի նորոգում | 95.23.1 | Ցանկ N16 |

կտեղեկանաք Ձեր կողմից ներկայացման ենթակա վիճակագրական հաշվետվություններին ու դրանց լրացման հրահանգներին,

**ՑԱՆԿ N7**

| Հաշվետվության անվանումը | Պարբերականությունը | Լրացման հրահանգ(.zip) | Ձևը(.zip) |
|---|---|---|---|
| 1-արտ (ամսական) | Ամսական | 1art-hrahang.zip | hs11.zip |
| 1-արտ (տարեկան) | Տարեկան | 1art-hrahang.zip | hs12.zip |
| 1-էներգետիկա (տարեկան) | Տարեկան | - | hs342.zip |
| 1-ԲՌ (տարեկան) - իրավաբանական անձանց համար | Տարեկան | hr289.zip | hs289.zip |
| 2-ԲՌ (տարեկան)- անհատ ձեռնարկատերերի համար | Տարեկան | hr314.zip | hs314.zip |
| 11-ՀՄ (տարեկան) | Տարեկան | hr46.zip | hs46.zip |

որոնց վրա հղում կատարելով կարող եք բեռնել դրանք Ձեր համակարգչում: